

# Մ Ի ԱՆՅԱՅՑ ՏԱՂԱԲԱՆ

Չարմախի պատկերը — Տաղարամի ստեղծագործութիւնները — Բարոյա-խրատական տաղեր — հմբոյժի եւ ուրախութեան երգեր — Սրբիտական ստանաւորներ — Սիրտազներ — Հարսանեկամ ստանաւորներ — Կրօնական տաղեր — Աշխատաւորական երգեր — Այլարժանեկամ ստանաւորներ — Պատմական արձագանքներ — Հայրենասիրական տաղեր — Շնչեղեղային, ստանաւորներ — Յորտոյժի երգեր — Տեղագրական-Յամայարհոյրական — Իմաստասիրական խոհեր — Հատարակական ստանաւորներ — Ջանազան տաղեր — Տաղարանի իրրու աշուղ — Որպէս մանրանկարչ — Որպէս քարտաշ-ֆորագրիչ — Գեոմէթրիկ պատմութեան հիմնական էջերը — Վերջորամ:

Ա.

## ՉԱՐՄԱՀԱԼԻ ՊԱՏԿԵՐԸ

Իրանի Իսֆահան նահանգի կեդրոնական դաւառներից մէկն է Չարմախը, որին առանձին գեղեցկութիւն են տալիս սառնորակ եւ կաթնահամ աղբիւրներով հարուստ մէջ լեռները եւ լայնատարած Հովիտներն ու բոտաները, որոնք դարձնան զարդարում են թաւիչ կանաչներով, արւան ծաղիկներով ու դունձազեղ բոյսերով եւ աւելի խորացնում դաւառի բանաստեղծական սպասարութիւնը:

Չարմախի չքնաղ բնութեան պատկերները ու տաղի նիւթ են դարձրել ժամանակի յայտնի պողպարաններն ու երգիչները, որոնցից առանձին ուշադրութեան արժանի է դաւառի Հայ գրականութեան պատմութեան մէջ դեռ անյայտ մի արժէքաւոր առաջաբան: Դա Սիմոն Մանուկի է, որ սարել է եւ ըստեղծագործել 18-րդ դարի վերջում:

Այս անձնօթ յաջապատեցի ստեղծագործութիւններից մեկ աւանդ է մնացել ճճաղ Չարմախի խորագրով պարզ բայց սիրուն ոտանաւորը, որ իր բովանդակութեամբ եւ կառուցումով ազգագրական-տեղագրական արժէք ունի, որ պատկերանում է նախկին Հայաստանի դաւառն իր բնութեան գեղեցիկ տեսարանով եւ գեղջկական կեանքի՝ իր Հիմնական գծերով: Տաղը դարդարում է 1780 թուին հայաբնակ Սիրաք գիւղում դրուած ձեռագիր տաղարանի 58-րդ էջը եւ իր կառուցողական արուեստով ներկայացնում է Հեռեւեակ պատկերը:

Ավանդ եւ, Չարմախ', չքնաղ ու սիրուն, Ռենս բանքը սարեւ, կամանչ ու ծաղկան, Կանգնիլ եմ կայարս ֆեայլարք ու Սազուն, Եւրեպար եմ բանի իունգո, Ջուրինո, Գուդունո:

Կանգնիլ եմ պտակ Մազար-Դոյստար, Ջանգինո Սիրուն եմ Ջարդինո, Մեարինո, Անանգարինո Ռենն սառն ու կարտաւտ արպարին, Վազունգ եմ, կշկունտ առ ու գեղեր:

Միծաղուն եմ սիրուն կամոնչ յանիրիս ու դաւառս Արուն եմ հարմարով էծիս ու սիւարմեր. Սիրուն եզեր ու կոպիք, հորքեր ու ժիք, Վազկունտ եմ ուրախ-ուրախ ուլ ու գտներ:

Գեղանանքին Ռենն աշխատար ու դոնայտար, Պարզարին 18 եմ, միամիդ եւ շատ գրաւեր. Այլգներն Ռենն սիրուն, շէյրանի մամո, Հարաներդ աննուշ, սիրուն լուսնագի լում, Ռենն համեստ վարք, քաղք բուրառ ու բարբ:

Չարմախ', քաղք եմ երգերդ ու տաղեր, Ռենն Բազարս օլիլ, Միսկին Մէյրան օլիլ, Այլգներ եմ յայտնի, սիրուն ու յարգի. Անգ տազ Մէյրան Սիմոն Մանուկին:

- 1) Անանգ. 2) բարբ. 3-12) Չարմախի յայտնի սարեւն եւ. 13) աղբիւրներ 14) մարգ. 15) այծ. 16) գիւղացիներ. 17) հիւրաւեր. 18) պարզաւիրտ. 19) աշուղներ. 20) հման. 21-23) Չարմախի այլ հնագոյն աշուղների եւ ազգարանի մասին կենսագրական տեղեկութիւններ պակասում են:

Բ.

ՏԱՂԱՍԱՅ-ԱՇՈՒՂ ԴԱՆԻԷԼ ԼԱՆՆԱԶԱՐԵԱՆԻ ՍՏԵՂԵԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Չարմահայ դաւառի Հայքաճակ Մամու-  
րան գիւղի Ժողովրդի զաւակն է մի վաստա-  
կաւոր տաղասաց-աշուղ: Դա Դանիել Լախ-  
նազարեանն է:

Իրբեւ տաղաբան եւ Չարմահայի ղեղ-  
նակ Ժողովրդին աւանդ է թողել գունազեղ  
տաղեր ու ոտանաւորներ, որոնք յաս-  
կանչական են իրենց բազմազանութեամբ:  
Յարինել է նա քնարական-սիրային, խրա-  
տական, երգիծական, հայրենասիրական,  
պատմական, հասարակական եւ այլ բովան-  
դակութեամբ տաղեր: Սակայն զբանցով  
նա չի սահմանափակել իր գրական վաս-  
տակը: Գրել է նաեւ զուտ Հայկական ինք-  
նուրոյն սիրավէպեր, Հայ բազմազարեան  
կեանքի փառաւոր անցքերի վրայ հիւստեան  
դիւցազնեղութիւններ, աւանդական Հայկ  
նահապետին, Արամին, Արա Գեղեցիկին եւ  
Շամիրամին ու Վահագնին նուիրուած, ս-  
րունց տաղարանը փառ երեւակայութեամբ  
ծաղկեցրել է եւ զարդարել բանաստեղծ-  
կան-աշուղական արուեստի ճոխ եւ հա-  
րուստ երանգաւորումներով:

Երգչի տաղացանկերում յատուկ տեղ են  
գրաւում նաեւ իրանուհայ հնազոյն աշուղ-  
ների թրքերէն լեզուով գրած արձակ եւ յա-  
փածոյ սիրային պատմութիւնները, որոնց  
նա հայերէն է թարգմանել: Գրանցիչ  
յուսանի են ճիւղաթ Միրզա եւ Գիւլջար  
Նսանու, «Մալէֆաղա եւ Գիւլաւան Ուս-  
նում», «Հաջիգաղա եւ Նարզիզ»: Այդ ըս-  
տեղծագործութիւններով տաղաբանը հա-  
րաստացրել է Չարմահայի Հայ աշուղական  
գրականութեան եւ Ժողովրդական բանա-  
հիւտութեան գանձարանը:

Մի հանգամանք սակայն ուշադրաւ է:  
Տաղարանն իր տաղերի ու ոտանաւորների  
մեծ մասը գրել է զլիւարապէս Բագուին  
նուիրուած ժամանակ: Ահա իր վկայու-  
թիւնը. «...Հաւանական է, թէ ո՛չ, շատ  
րոտիւր գրեթէ իմ Հարբած օրերին է գըր-  
ւած. երբ մի րոտակ խմել եմ, սկսել եմ  
բանաստեղծութիւն անել»: Իր աւանդ թո՛ւ  
դած առաջին ձեռագիր մատենանի յառաջա-

րանում ընդդէմ է նաեւ այսպէս. «...Բայց  
գրում եմ սրանք այն օրերը, որ բոլոր  
կեանքս արբեցողութեամբ եմ անցկացրել»: Իսկ  
«Արբեցողի Կտակարանը» խորագրով  
ոտանաւորի ճակատին կարգում ենք. «Ընձ  
կունքս զլիւարապէս անց եմ կացրել հար-  
բեցողութեամբ»: Մի այլ տաղում նկա-  
լադրելով արբեցողի, զինեմօլի տխուր եւ  
խղճալի վիճակը, իրեն խրատում է.

«Ո՛վ Դանիել, դու հարբեցող ես, որ գրում ես,  
նայն խմիչից է որ մեղաքիմնք կրում ես»:

Տաղարանն իր տաղերն իր ձեռքով ար-  
տագրել ու ամփոփել է երկու մեծադիր  
մատենաներում, որոնք մեծ չափով նպաս-  
տում են երգչի կենսագրութեան հետ կապ-  
ւած մի շարք հարցերի լուսարանութեանը:  
Այդ ոտանաւորները սակայն, մինչեւ օրս էլ  
աւանձին ուսումնասիրութեան նիւթ չեն  
դարձել եւ զեռմամբ են անտիպ: Այս մասին  
կարգանք աշուղի վկայութիւնը. «Հիմա այս  
իմ տեսրակները ձեռագիր են՝ իմ ձեռքով  
գրուած. ոչ մի հոգուց արտագրուած չէ,  
բոցի թրքերէնը. սա կոչս է բոլորովին, աը-  
պագրութեան: մինչեւ օրս չեմ յանձնել»:

Ձեռագիր տաղարաններից առաջինը տա-  
ղասացը գրել է Չարմահայի Մամուրան Գիւ-  
ղում, իսկ երկրորդն ընդօրինակել է Արա-  
ղանում, 52 տարեկան հասակում, ինչպէս  
ինքն է գրել իր առաջին ձեռագիր մատենանի  
յառաջարանում. «Հասակս 52 էր, որ այս  
փոքր գրուածքը հաւաքեցի, որ գոնեայ իմ  
զուակներս, որպէս թէ արժան համարեն,  
վերցնեն կարգան եւ ծիծաղեն ու ասեն.  
«Մեր հօր բանաստեղծութիւնն է»:

Տաղարանը որտանց ցանկացել է իր մա-  
հից յետոյ գրական մի արժան կանգնեցնել,  
որպէսզի իր յիշատակը մարդկանց սրտե-  
րում վրտ մնայ: Այդ մասին են վկայում  
նրա ձեռագիր երկրորդ տաղարանում ար-  
ձանագրած հետեւեալ տողերը.

«Ողջ գրուածս տառերով, լրի բաւ ու գիծ ու կէտ,  
կը մնայ դարերով, կնկանաւորեամս օրից յետ»:

Կը գայ մին օր իմ խօսքում, արտասանած լսանքը  
 Կը խօսում իմ փոխաբերք, այք ու բնձի փոփոխը  
 Ի՛նչ խօսացիք ժմ կենդան օրերս, ի քրտակն մտքիս  
 Ի՛նչ հնար  
 Լոյս կը տեսնի այս գրքումս որպէս խօսում նո-  
 րանց հետ  
 Բայց ես մեռած, խօսում եմ կենդան մարդկանց հետ  
 Բերանով ես պատմում եմ իրենց կէտ առ կէտ  
 Դեմքով ես անհերձայք, բայց խօսեմու նորանց մտ  
 Ու անցողից Ես պատմում եմ, կարդացողին համա-  
 յուն  
 Մտքս մեռնելու է, մի հետք պէտք ա բողբոջու  
 Գրի առնի լու շուշերից, ապագայում կարգալու  
 Շատ շատերը կը գամ աշխարհ, հետք պէտք է ու  
 մնայ,  
 Թողու խօսեմը աշխարհս, բանգի այստեղից նա կը  
 գնայ  
 Աշխարհիս գործերն է այսպէս, կամոնն է քնական  
 Հնարն եմ վնայու, պատճառ նորիք ցիտի գամ  
 Թող չը հախթի ձեր խօսքին եւ գրուածքին  
 Էմ դաման մահն, որ գրելի է աշխարհինն:

Սակայն մի երեւոյթ ընդգծենք, որ տա-  
 զարան Դանիէլի մի շարք ոտանաւորներն ի-  
 րենց կատուցողական արուեստով թէեւ չափ  
 ու յանդ ունեն, բայց իսկական բանաստեղ-  
 ծութիւններ չեն: Այդ երեւոյթը պիտի բա-  
 ցարտել նրանով, որ նա կանց չի առն ո՛չ  
 լեզուական անկանոնութիւնների, ո՛չ քեր-  
 վրդական արուեստի ու տաղաչափութեան  
 օրէնքների առաջ եւ ո՛չ էլ զեղարուեստա-  
 կան մշակման գրայ: Նա գրել է ինչ որ  
 մտածել է, ինչպէս որ նիւթը ներշնչել եւ ո-

գեւորել է նրան: Այդ է պատճառը որ տա-  
 զարանն իր մեռադիր մատենանում ան-  
 կեղծօրէն սրճանապրկի է թէ Հնչ ժողո-  
 վրդիդն իր յաւնդ թողած տաղերից շատերն  
 ոտանաւորի ձեւով գրուած բանաստեղծու-  
 թիւններ են: Նա շատ լաւ է հասկացել, որ  
 ոտանաւոր գրութիւն եւ բանաստեղծութիւն  
 տարբեր բաներ են: Այս մասին տաղարանն  
 իր առաջին մեռադիր մատենան յառաջաբա-  
 նում գրել է՝ այսպիսի բնորոշ տողեր. «Յար-  
 գելի՛ր ընթերցողներ, այս տետրակը գրում  
 եմ ո՛չ թէ՛ օրինաւոր բանաստեղծութիւն...  
 Ուղում եմ սակէ գրուածքս տեղին չէ, բայց  
 ի՛նչ միտք զնէք, բաւական խորհուրդ ունի-  
 թէեւ ես սխալներ շատ եմ գրած մէջը, որ-  
 պէս ես քերականութիւն կարդացած մէկն  
 չեմ... Այս տետրակը գրում է որպէս գիւ-  
 ղարնոյթ, որովհետեւ գիւղացիները աւելի  
 լաւ կը սիրեն, քան թէ քաղաքացիները»:

Արձանադրենք մի երեւոյթ հետ: Տաղա-  
 բան Դանիէլի որոշ տաղերն ունեն իրենց ե-  
 զանակները, զորս յօրինել է երգիչը եւ ինքն  
 էլ չօնգուրի գմուռ նուազածութեամբ, իր  
 զուրեկան ձայնով երգել է հարսանեկան  
 հօնդէսներում, խնջոյքներում, հաւաքոյթ-  
 ներում եւ հաւաքամարտերում: Այդ երգերն  
 ու եղանակներն էլ շատով տարածուել են եւ  
 շարժել ժողովրդի սեփականութիւնը:

Այժմ տեսնենք, թէ տաղաբանացուող  
 Դանիէլի օտեղծագործութիւններն, իրենց  
 հիմնական բովանդակութեամբ, հասարա-  
 կական տեսակէտից, ի՛նչ արժէք են ներ-  
 կայացնում:

1.

Քաղաք-խրատական տաղեր

Տաղարան Դանիէլն իր տաղերում պատ-  
 կերել է կեանքի դիւաւորապէս կարեւոր եւ  
 էական երեւոյթները: Այդ տեսակէտից նրա  
 ձեռագիր մատենաներում առանձնաշատուկ  
 սեղ են գրուում բարոյա-խրատական ոտա-  
 նաւորները, որոնց հիմնական գիծը ճշմար-  
 տութիւնն է: Երգիչը ո՛չ միայն սիրում է  
 ճշմարտութիւնն ու արդարութիւնը, այլեւ  
 դատապարտում է սուտը, կեղծիքը եւ հա-

բերայութիւնը. նա մերումեծելով կեանքի  
 էութիւնը, եկել է այն եզրակացութեան՝ որ  
 աշխարհում մարդս անցողական է եւ՝

«Աշխարհում մարդը խոտի նման ա.  
 Այսօր որ կանանցեց, վաղը կը չորանայ»:

Ուստի, տաղարանը մարդկանց խրա-  
 տում է այս երազ աշխարհում բարի, հա-  
 մեատ ու առաքելի լինել, ուրիշներին յար-

զել ու պատուել, իսկ ընկերներին սրտանց սիրել եւ միշտ ճշմարտութեամբ բարձրացրել: Բայց երգչը բարձր է գնահատում ո՛չ միայն բարութիւնը, ազնուութիւնը, առաքնութիւնն ու ընկերասիրութիւնը, այլ լին մաքուր եւ ազնիւ զգացումները: Խորհուրդ է տալիս նաեւ գործարութեան նախապարհով ուղիղ գնալ, իսկ խարդախ, խարբեայ եւ ամբարիշտ մարդկանցից, զատ ու շուտից՝ հեռու կենալ, կոխներկց զգուշանալ, վտա գործից էլ միշտ խուսափել ու լաւին ձգտել եւ բարիք անել: Ահա տաղաբանի սրտագին պատգամը:

«Ընկերներից հետ վարվիր սրտի, մտուր, քարի սրտով,  
 Ձեռ տեսանի բոլորովին քն կենճուճ ցաւ ու վրդով  
 ... Եղէք բարի, առաջիմի, չէք տեսանի երբէք  
 փորձամբ.  
 Ո՛ր որ պատուես, չի կորչելու, առնելու եւ հորին  
 յարգամբ

Խարդախ ու ամբարիշտների գլխին է միշտ քափուտ զտանց  
 էլ ինչու՞ արդարութեամբ ցամազարձն ուղիղ չը գտնէք

... Ետա ու շուտից հեռու կացիր, կոխներից զգուշացիր.  
 Վտա գործերից միշտ խուսափիր ու լաւերին տեսնցիր»:

Աւելի խորացնելով իր խրատական տաղերի բովանդակութիւնը, տաղասաց Դան-իւր խորհուրդ է տալիս նւթազաշտ, արծաթաւէր, ազահ ու ժլատ չլինել, այլ զըրբամական զոհողութեամբ ուրիշներին երջանկացնել, քանի որ տյա աշխարհից ոչ ոք իր Հնա որեւէ բան չի տանելու: Նա զիտէ նաեւ, որ Հարուստ թէ աղքատ, իշխան թէ թաղաւոր, բոլորն էլ այս աշխարհում հիւրեր են, աստի խրատում է սերով եւ խաղաղութեամբ ապրել:

Բարոյական յտականիչներով օժտուած տաղաբանը քննադատում է մարդկանց թերութիւնները, արատներն ու պակասութիւնները: Ամբողջ Հողով ատում է նաեւ բամբասանքը, շարախօսութիւնը, գրպարտութիւնը, դատապարտում է՝ մեծամեծներին,

րին, ծոյլերին, շահամուտներին, կողերին, իսկ բարձր է գնահատում աշխատասէրներին, մարաններին, ջանասէրներին, խոնարհներին ու համեստներին:

«Ետա վերեւ մի՛ բարձրանաք, շուտով կը դառնաք  
 Գաւ  
 Ետա մտակ աշխատէք, ոչ բէ՛ ծոյլ, որ լինէք կալ  
 ու մաշ  
 ... Գող մի՛ լինէք, շատ շատերը ամիսից գողու-  
 քիւնով  
 Գտնելի են անարդար, չեն վստահուել աջ մի բռնով  
 Ետա շատերին սպանել են ու վերջացրել կայազանով.  
 Ձեմ ստածել այդպիսիքը, որ մահ կ'երթան իրենց  
 կամով  
 Աշխատէ քն վտտակով ու վայելիր ճաղցր կամով,  
 Երկնը հանգիստ ու միտմիտ, երեխայնովդ ապտեհով»:

Տաղաբանն երկատարչներին եւս առանձին բարի խորհուրդներ եւ պատգամներ է տալիս. խրատում է յարգել ու պատուել բոլոր մեծերին, ծնողներին, շնորհալ նշրանց բարութիւնն ու խրատները եւ միշտ նրանց գգամ լուսւոր ճանապարհով ընթանալ:

«Կ'ուզե՞ս լինես իմաստուն,  
 Նախ ճանաչիր մեծերդ գում.  
 ... Պետք ա պատուես ծնողիդ,  
 Նա է կամէք դնողիդ:

Ձի մտամա լաւութիւմ,  
 Դա է մարդի յատկութիւմ.  
 Թէ չես ամուս հասուցում,  
 Գոմէ խօսեով յարգի գում»:

Տաղաբանը մի ձգտում եւ բարի ցանկութիւն ունի. քառականերով մարդիկը կրթիւ, դատախարակել եւ աշուտացնել նրանց Հողիները: Այդ նպատակով էլ նա բոլորին խորհուրդ է տալիս Հեռու մնալ Հասարակութեան խաղաղ կեանքը թունաւորող շարերից, յիմարներից, անվտիշներից, իսկ վտա ընկերներից միանգամայն խուսափել:

\* «Ամբոյից կեռացի,  
 Հետք մի՛ հետիր կացի.  
 Կը վտարի ողջ կեպի,  
 Խոտերս փշոք իմացի»:

Վատ զնկերից խուսափիր  
Առ քո օրոտում պայման գիր,  
Որ չվարակուես ճրամով,  
Դուռը երեսին միշտ փակիր»:

Տաղարանի նպատակն է մարդկույն սրբ  
ուհերն ո՛չ միայն գեղեցիկ յատկութիւններով՝  
Համակել, այլև նրանց ուսմանը դէպք  
բարին ու գեղեցիկը: Այդ ցանկութեամբ էլ  
նա քարոզում է ստեռ յասել եւ միշտ ճիշդ  
եւ ողորդ խօսել, որովհետեւ՝

«Ուրիշ խօսքը վանած է,  
Թշնամուց միշտ կը պաշտպանէ.  
Սուսն է մի տուն, առանց եկամտի մի միջի,  
Սէլաւ կը գայ, կը տանու»:

Կրճճ՝

«Դատաւորին ճիշդը կ'ստես,  
Թէ քր հազարներ կը վնասուես.  
Չի կորչել ճշմարտը,  
Սուս չասես, արտօս ես:

Սուս առդի տունը այրվեց.  
Ո՞րը հուստող չը ճարվեց,  
Ինչեմ կանցե՞ր՝ քէ օգնեցե՞ք,  
Խնձ՝ շուտ ե՞ս ու փրատակիցե՞ք:

Տաղարանն իր կեանքի փորձառութիւն՝ ր  
Հիմք ունենալով՝ նորանոր խորհուրդներ է  
տալիս. խրատում է յուզուած եւ վրդովուած  
ժամանակ Համբերել եւ, երբեք «Վաստ  
քեր» չասել եւ ուրիշներին չվիրաւորել,  
որովհետեւ՝

«...Վատ խօսքը է գնդակից աւել,  
Ողբ բնութիւն կ'ամի աւեր.  
...Վատ խօսքը արան է մնում  
Ու երբեք մտքից չի գնում.  
Հետգինտ ցամ է մեծանում,  
Որպէս բոյն սրբան է այրում:  
Մրի, բրի եարեմ գնում է,  
Վատ խօսքը միշտ մնում է  
Ու խօսեմքն խօսք է մնում,  
Թշնամութիւն հա՞յ միշտ մնումս:

Երգէլ Դանիէլի ձեռագիր մատենաների  
բարոյա-խրատական գրականութեան Հա.

րուստ գտնաբերաններ են, որտեղ կարգուժ  
էջ մէկը միւսից օգտակար խրատներ է.  
բարի խորհուրդներ, որոնք ձգտում են  
մարդկանց լուսաւորել եւ Հասարակական  
կեանքի Համար պատրաստել ազնուասիրտ  
բարեկիրթ, առաջինի, աշխւ եւ պայշառ  
անհասներ, Այդ նպատակով էլ տաղարանը  
յօրինել է նորանոր տաղեր. մի ասանուորում  
նա քարոզում է ո՛չ միայն քաղցր ու անու.  
խօսել, այլև միշտ Համբերատար լինել, ս-  
րովհետեւ Համբերութիւնը կեանք է եւ «պո-  
տուղ է բերում»:

«Երևանը լեզուն անուշ է,  
Վատ լեզուն բոցով փուշ է.  
Մի՞նչեւ վատքը հասկանամ.  
Կեանքը անցել է, ուշ է:  
Բերանը սամիր, համբերի,  
Համբերանքը պտուղ կը բերի.  
Թէ եղար դու անամբեր,  
Կրակ կ'ընգան. տունը կ'այրի»:

Նոյնպէս խրատում է կեանքում «Ճշմա-  
րիտ» լինել եւ պատիւը բարձր պահել, ս-  
րովհետեւ ազնիւ մարդն ապրում է իր  
պատուի Համար.

«Ճշմարիտ եզի՞ր, բոց աղքատ լինես.  
Պատիւ պահիր, բոց մերկ լինես.  
Եղանակ եմգիտու կը լինես,  
...Դանիէլ, աշխարհ այսպէս է,  
Քո խօսեմքն ո՛վ կը լսէ,  
Բայց պատիւն շատ փոքոս է.  
Հնշտ չի ճարվում, ասեմ ձեզի:  
Մարդ ապրում է պատվի համար,  
Ճնշատիւն է անօր, յիմար.  
Նամուս ունես, դաւ ջեղ համար,  
Ո՛չ քէ օտարին, ասեմ ձեզիս:

Տաղարանն իր խրատական տաղերով շօ-  
ւափել է Հասարակական մի այլ ցուցակի կ-  
րեւոյթ: Երկար տարիների փորձառութիւ-  
նից նա եկել է այն եզրակացութեան, որ  
կեանքում անյաջողութեան, ազատութեան  
եւ դժբախտութեան գլխաւոր պատճառն  
րից մէկը շուսլութիւնն է, ուստի խորհուրդ  
է տալիս՝ ապահով ու երջանիկ ապրելու:  
Շամար շուսլ չլինել, «չափը չկորցնել», այլ  
չափաւոր լինել:

«Տափղ մի՛ կորցնել, վերջը շատ կը վճանեք,  
 Յետոյ երանի՛ կը տաս մրանց, որ ե՛ն չափաւոր-  
 թի չափաւոր յիմես, ոչի՛մը չվճարես,  
 Կը տեսնուս, որ տպրտտոյ է փառաւոր:

Շտայմ չի վայելի շարունակ ուրախ,  
 Մէկ աչքորդութիւն է, կազար անգամ ձախ.  
 Շտայի ծայսերը՝ յեշտէ գարեան սէլը.  
 Գոր ոչխարի՛մ հանգիպի պատառող գէլը:

Տաղարան Դանիէլը դիտէ որ մարդկանց  
 թերութիւններն ու պակասութիւնները բազ-  
 մադան են, որոնց անհրաժեշտ է սրբադրել  
 և ուղղել: Նա դիտէ նաև որ Հասարակու-  
 թեան մէջ կան այնպիսի մարդիկ, որո՞ւ  
 խօսել չեն իմանում, բայց խօսելազաւ ու-  
 նեն. նման անպիտակից մարդկանց տաղա-  
 րանը յիշեցնում է թէ որոշ տեղերում լը-  
 ութիւնն ոսկի է, ապա կոչ է անում քիչ  
 խօսել, լուռ մնալ և անուան հմայքն ու կո-  
 շուրը բարձր պահել. չպէտք է մոռանալ,  
 որ անկշիռ և անպատասխանատու խօսքերի  
 պատճառով անհաճելի թիւրիմացութիւններ  
 են առաջանում:

եփօսել չիմացող լաւ է,  
 Լաւ մնայ, չը խօսի, որ ցաւ է.  
 Քանի որ անկշիռ խօսքերից  
 Միշտ հայտնամբ ու դաւ է:

Երգիչը շօշափել և քննութեան է առել  
 այլ կարեւոր խնդիրներ, որոնք ընտանեկան  
 ու Հասարակական կեանքում որոշ դեր է  
 կատարում: Նա գիտէ որ պարկեշտ, Հա-  
 մեստ, առաքինի և ազնիւ կանայք շատ  
 յարգի են ու թանկագին, որովհետև նրանք  
 իրենց ամուսնու և ընտանիքի պարծանք  
 են: Ահա թէ ինչու՛ տաղարանը դատապար-  
 տում է այն մարդկանց, որոնք իրենց օրի-  
 նաւոր ամուսնութեանը Հաւատարիմ չեն  
 մնում, դաւաճանում են իրենց կեանքի ըն-  
 կրուունք և ցոփ ու զեղի կենցաղով քայ-  
 րալում ընտանեկան խաղաղ ու ներդաշնակ

Փեկիւի  
 (Շար. 1)

կեանքի երջանկութիւնը. նման անաղնիւ ու  
 անխիտ մարդկանց. տաղասացը խրա-  
 տում է:

«Մէ կի՛նը լաւ է, օրիճաւոր,  
 Կեանք է միշտ փառաւոր.  
 Թէ ունեցար դու շատ կի՛ն,  
 Ողջ համապարիզ է մօլոր»:

Դանիէլը շատ լաւ է ուսումնասիրել նաև  
 իր ժամանակի Հարուստների Հողբանու-  
 թիւնը և փողի աւերիչ դերը: Նա դիտէ որ  
 նրանք ո՛չ միայն արծաթախէր են, դրամա-  
 պաշտ, շահամուլ, փառասէր ու մեծամիտ,  
 այլև Հարստութիւնից շլացած՝ կորցրել են  
 իրենց հողեկան ղեղեցիկ յատկանիշները և  
 ժողովրդի երջանկութեան Համար նիւթա-  
 կան զոհողութիւններ չեն անում: Այդպիսի-  
 ներին տաղարանը բարի խորհուրդ է տալիս:

«Լրծաքասէր մի՛ յի՛նի,  
 Որ միտք գոզ չի՛նի.  
 Սահման դիր քո կամփիդ,  
 Վերջը արիւմ չի՛նի»:

Միմիայն իրենց սուճակահան Հանձնքներով  
 ապրող եւ ժողովրդին բարութիւն չանող ա-  
 դահ, ժլատ և կծծի ունեւորների պատկերը  
 դժելիս, տաղարանը նրանց խաւար և  
 մթաղնած մտքերը լուսաւորելու նպատա-  
 կով արձանապրել է այսպիսի տողեր:

«Լաւ է պատտա հացը բարիքով,  
 Ուրախ ապրես գաւակիքով.  
 Չարժէ միթե՛ հարստութիւն,  
 Կեանքը վրդով ու խռով»:

Կամ՝

«Լաւ է մարդիս ամու՛մ բարի,  
 Թանգ է գինը շատ գտարի.  
 Ի՛նչ օգուտ է փաղաւոր,  
 Նմամ ես անբամ յիմարի»:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ